



ԵԳԾ Տեղեկագիր

Երիտասարդության և համայնքների գործողությունների ծրագրի եռամսյակային հրատարակություն



№ 2 (3)
2008թ. ապրիլ-հունիս



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ԵԳԾ-ն ԱՄՆ ԱԶԳ կողմից ֆինանսավորված հնգամյա ծրագիր է, որը մեկնարկել է 2004թ. հոկտեմբերին: Ծրագիրը գործում է Հայաստանի 80 համայնքներում և նպատակ ունի խթանելու քաղաքացիների մասնակցությունը հանրային հարցերի լուծման գործում: Ծրագրի շրջանակներում համայնքներին տրամադրվում է կազմակերպչական աջակցություն Երիտասարդական գործունեության ակումբներ (ԵԳԱ) և Համայնքների գործունեության համընթացողներ (ՀԳՀ) հիմնադրելու համար: ԵԳԾ-ն ֆինանսավորում է տրամադրված համայնքների կողմից նախաձեռնվող և իրականացվող ծրագրերի համար: Սույն տեղեկագրում նկարագրված նախաձեռնությունները կազմակերպվել են համայնքների կողմից և ֆինանսավորվել են տեղական տարբեր հովանավորների կամ դոնոր կազմակերպությունների կողմից:

Վերապահում. սույն տեղեկագրի տպագրումը հնարավոր է դարձել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցության շնորհիվ՝ կրթության զարգացման ակադեմիայի կողմից իրականացվող Երիտասարդության և համայնքների գործողությունների ծրագրի շրջանակներում: Սույն տեղեկագրի մեջ արտահայտված տեսակետները և կարծիքները պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ կառավարության կամ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետները:

«Երեւանը 5 օրում 2008»

Երիտասարդության քաղաքացիական կրթության ծրագիր

Երիտասարդության և համայնքների գործողությունների ծրագրի (ԵԳԾ) շրջանակներում այս տարի 3-րդ անգամ կազմակերպվեց և իրականացվեց «Երեւանը 5 օրում» Երիտասարդության քաղաքացիական կրթության ամենամյա ծրագիրը: Հունիսի 23-ից 27-ը Հայաստանի 10 մարզերը ներկայացնող 35 երիտասարդներ 5 օրով ժամանեցին Երեւան՝ այցելելու պետական կառույցներ և տեղեկանալու այն մասին, թե ինչպես են դրանք գործում հանուն պետության և ազգի առաջընթացի: Ծրագրի նպատակն էր Հայաստանի համայնքներում բնակվող երիտասարդներին հնարավորություն տալ ավելի մոտիկից ծանոթանալու պետական մարմինների աշխատանքին և հարստացնելու նրանց գիտելիքները իրենց՝ որպես ժողովրդավարական պետության քաղաքացիներ, իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Մասնակիցները շրջեցին տարբեր հաստատություններով, հանդիպեցին ՀՀ Նախագահի աշխատակազմի, Ազգային ժողովի, ընդհանուր իրավասության և վճռաբեկ դատարանների, Կենտրոնական Բանկի, «Արմենպրես» լրատվական

կան գործակալության, Սպորտի և երիտասարդության հարցերի, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Արտաքին գործերի նախարարությունների ներկայացուցիչների հետ: Նրանք նաև մասնակցեցին քաղաքացիական հասարակության վերաբերյալ ինտերակտիվ սեմինար-հանդիպումների՝ կազմակերպված տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից, հարստացրեցին ընտրական ընթացակարգերի, տեղական ինք-

նակառավարման համակարգի, հակակոռուպցիոն նախաձեռնությունների և ժողովրդավարական պետությունում լրատվամիջոցների դերի վերաբերյալ իրենց գիտելիքները, ինչպես նաև հնարավորություն ունեցան միջանց հետ փոխանակել զարգացողներ և իրենց համայնքներում իրականացված ծրագրերի մասին տեղեկություններ՝ ավելի հզորացնելու Հայաստանում ԵԳԾ համայնքների և քաղաքացիական ուժերի ակտիվ երիտասարդների ցանցը:



«Երեւանը 5 օրում» ծրագրի մասնակիցների հանդիպումը 77 Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հետ

Տեսաֆիլմ Դիլիջանի ԵԳԱ-ի մասին. 2 տարվա գործունեության ամփոփում

Շուրջ երեք ամիս Դիլիջանի ԵԳԱ անդամները (Տավուշի մարզ) զբաղված էին ակումբի և դրա գործունեության մասին պատմող տեսաֆիլմի նկարահանման հետ կապված աշխատանքներով:



2008/06/20

Դիլիջանի ԵԳԱ գործունեության մասին պատմող տեսաֆիլմի ներկայացում

Ֆիլմը նվիրված է ԵԳԱ-ի հիմնադրման երկրորդ տարեդարձին և ամփոփում է ակումբի գործունեության երկու տարիների ընթացքում համայնքում ԵԳԱ կողմից իրականացված ծրագրերը և այլ նախաձեռնությունները: Տեսաֆիլմը պարունակում է նաև հարցազրույցներ ԵԳԱ անդամների, Դիլիջանի քաղաքապետի, ՀՀ ներկայացուցիչների, համայնքի երիտասարդների և այլ անդամների հետ: Ֆիլմը ներկայացնում է ԵԳԱ անդամների ներդրումը համայնքի զարգացման գործում, ինչպես նաև նրանց՝ Դիլիջանի երիտասարդների մոտ գիտելիքներով ու հմտություններով զինելու և համայնքի զարգացմանն ուղղված տարբեր ծրագրերում ներգրավելու ջանքերը: Տեսաֆիլմի նկարահանման համար միջոցներ հայթայթելու նպատակով ԵԳԱ անդամները

դիմել էին քաղաքապետարան և տեղի գործարարներին, և նրանց հաջողվել էր հավաքել նկարահանման համար անհրաժեշտ գումարը: Դիլիջանի ԵԳԱ գործունեության մասին պատմող «Ինքնահաստատում» տեսաֆիլմի պրեմիերան տեղի ունեցավ ԵԳԱ գործունեության կենտրոնում ս.թ. ապրիլին: Հունիսին ԵԳԱ անդամները այցել կատարեցին Դիլիջանի N1, 2, 4 և 5 դպրոցներ, որտեղ նրանք ներկայացնում էին ԵԳԱ առաքելությունը և ակումբի կողմից իրականացված գործունեությունը, ինչին հետևում էր տեսաֆիլմի ցուցադրումը: Այնուհետև, ԵԳԱ անդամները մեծ սիրով պատասխանում էին երիտասարդների հարցերին՝ փորձելով նրանց տալ հնարավորինս մանրամասն տեղեկություններ ԵԳԱ գործունեության և նպատակների մասին և քաջալերել նրանց միանալ ԵԳԱ-ին և լինել ավելի ակտիվ:

Այս համարում նաև

- 1 *Լուծվեց Գառնահովիտ համայնքի մոտ քաղաքացիական կիչների խմելու ջրի խնդիրը* 2
- 2 *Համայնքի խնդիրները երեխաների աչքերով. նկարների ցուցահանդես Ծովագյուղում* 2
- 3 *Շիրակ մարզի երիտասարդությունը միավորվում է լուծելու բնապահպանական խնդիրները* 2
- 3 *Քաղաքացիական ակտիվություն Լոռիում. Կանանց իրավունքների մասին իրազեկության բարձրացում; պայքար կոռուպցիայի դեմ* 3
- 3 *Սեմինար Խնածախում՝ համայնքի երիտասարդներն այժմ տիրապետում են համակարգչի և ինտերնետից օգտվելու հմտությունների* 3
- 3 *ԵԳԱ/ՀԳՀ գործողությունների պլանավորման աշխատանքային հանդիպումներ ԵԳԾ 12 մոտ համայնքներում* 3
- 4 *Համայնքի բյուջեի և զարգացման պլանի քննարկում Գոմքում* 4
- 4 *Կոտայք մարզի ակտիվ խմբերն արձագանքում են համայնքի կարիքների* 4

ԵԳԾ-ում ընդգրկված համայնքներ

- Ներկայումս հանրապետության տարածքում գործում է Երիտասարդական գործունեության 36 ակումբ և Համայնքի գործունեության 44 համընթացող
- Ամենափոքր համայնքը Չովաշենն է, որն ունի 206 բնակիչ, իսկ ամենամեծը՝ Դիլիջանը՝ 16,202՝ բնակիչ
- Ամենատեղեք տարիների ընթացքում ծրագրին մասնակցել է ավելի քան 1,500 կամավոր և իրականացվել է ավելի քան 1,000 քաղաքացիական նախաձեռնություն

*2001թ. մարտիամս, <http://www.armsat.am>

Լուծվեց Գառնահովիտ համայնքի նոր թաղամասի բնակիչների խնելու ջրի խնդիրը

Ապրիլ ամսին Գառնահովիտի ԶԳԶ-ն (Արագածոտնի մարզ) ավարտեց դեռևս անցյալ տարվա աշնանն սկսած՝ համայնքի նոր թաղամասում խնելու ջրի ներքին ցանցի կառուցման ծրագիրը: ԶԳԶ անդամների ջանքերի եւ հետեւողականության շնորհիվ համայնքի նոր թաղամասում խնելու ջրի բացակայության հարցը հայտնվեց տեղական իշխանությունների եւ հասարակական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: «Հայաստանի գյուղերի գործողություններ» ԶԿ-ների ասոցիացիայի հետ ԶԳԶ-ի համագործակցության արդյունքում Գառնահովիտի նոր թաղամասում խնելու ջրի բացակայության հարցը եւ թաղամասում բնակվող մոտ 40 ընտանիքների վիճակը լուսաբանվեց ԱՄՆ

լրատվամիջոցներով, եւ, ի արձագանք այդ տեղեկությունների, սփյուռքահայ բարերարի կողմից խնդրի լուծման համար տրամադրվեց որոշակի գումար: Տրամադրված միջոցներով ձեռք բերվեցին ջրատարի կառուցման համար անհրաժեշտ նյութերը, իսկ նախագծման եւ ջրատարի կառուցման ողջ աշխատանքն իրականացվեց Գառնահովիտի ԶԳԶ անդամների կողմից, որոնց մեծ ոգեւորությամբ միացել էին նաեւ թաղամասի բոլոր բնակիչները: Ներկայումս Գառնահովիտի նոր թաղամասում բնակվող 40 ընտանիքներն ապահովված են խնելու ջրով: ԶԳԶ-ն շնորհակալական նամակ է պատրաստել եւ ուղարկել սփյուռքահայ բարերար պրն. Ջանի Սահակյանին:



Գառնահովիտի ԶԳԶ-ի կողմից նախաձեռնված եւ իրականացված ծրագրի արդյունքում համայնքի նոր թաղամասն ապահովված է խնելու ջրով

Համայնքի խնդիրները երեխաների աչքերով. նկարների ցուցահանդես Ծովագյուղում

Գյուղում առկա խնդիրների վերաբերյալ համայնքի երեխաների կարծիքը պարզելու նպատկով, ապրիլին, Ծովագյուղի ԶԳԶ անդամները (Գեղարքունիքի մարզ) նախաձեռնեցին եւ կազմակերպեցին «Ծովագյուղի խնդիրները երեխաների աչքերով» խորագրով նկարների ցուցահանդես: Կազմակերպվող միջոցառման մասին ԶԳԶ անդամները նախապես հայտարարել էին համայնքի դպրոցում եւ երեխաներին խնդրել էին նկարների միջոցով պատկերել համայնքի առաջնահերթ խնդիրները: Ցուցահանդեսի համար նկարներ ներկայացվեցին 25 երեխայի կողմից: Ցուցահանդեսը տեղի ունեցավ ապրիլի 25-ին Ծովագյուղի դպրոցում: Համայնքի բազմաթիվ բնակիչներ այցելել էին ցուցահանդես՝ տեսնելու, թե ինչ խնդիրներ են ներկայացրել իրենց համայնքի երեխաները:

Նկարներում պատկերված խնդիրներից էին գյուղի աղտոտվածությունը (փողոցներում, տների բակերում եւ կանաչ տարածքներում աղբալույտեր եւ թափոններ պատկերող նկարներ), համայնքում Մշակույթի տան բացակայությունը (կիսակառույց, երբեմնի Մշակույթի տան համար նախատեսված շենքը պատկերող նկարներ), գործազրկություն (փողոցներում անգործ թափառող, տեղից տեղ գնացող, տարբեր դռներ թակող, սակայն մերժումներ ստացող եւ փակ դռներ հանդիպող մարդկանց պատկերող նկարներ), երիտասարդական/ ժամանցային կենտրոնի բացակայություն, որտեղ երիտասարդները կկարողանային անցկացնել իրենց ազատ ժամանակը եւ զբաղվել սպորտով եւ մշակույթին կամ արվեստին առնչվող որևէ գործունեությամբ (իրենց տների բակերում նստած՝

սպորտի, համերգների մասին երազող տխուր տղաներ եւ աղջիկներ պատկերող նկարներ): Համայնքի բնակիչները չափազանց տպավորված էին երեխաների կողմից բարձրացված խնդիրների լրջությամբ, ինչպես նաեւ այդ խնդիրների ներկայացման գործում նրանց ցուցաբերած հնարամտությամբ եւ ստեղծագործական մոտեցումով: ԶԳԶ անդամներն իրենց խորին շնորհակալությունը հայտնեցին այն երեխաներին, որոնք մասնակցել էին ցուցահանդեսին՝ ներկայացնելով իրենց նկարները եւ դրանց մեկնաբանությունները, եւ խոստացան, որ ԶԳԶ-ն իր առաջիկա աշխատանքներում կփորձի լուծել ներկայացված խնդիրները: Ներկայումս ԶԳԶ-ն համայնքում իրականացնում է մաքրման եւ բարեկարգման ակցիա՝ գյուղի աղտոտվածության խնդիրը լուծելու նպատակով:

Ծովագյուղի խնդիրներն ըստ համայնքի երեխաների.

- Գյուղի աղտոտվածություն
- Գործազրկություն
- Մշակույթի տան բացակայություն
- Երիտասարդական/ ժամանցային կենտրոնի բացակայություն

Շիրակ մարզի երիտասարդությունը միավորվում է լուծելու բնապահպանական խնդիրները



«Երիտասարդների դերը շրջակա միջավայրի պաշտպանության գործում» թեմայով սեմինար՝ կազմակերպված Կանոյի, Սառնաղբյուրի եւ Ախուրյանի ԵԳԱ անդամների կողմից

Կանոյի ԵԳԱ անդամներ Լիանա Հակոբյանը եւ Արեւիկ Ղազարյանը, Ախուրյանի ԵԳԱ անդամ Սեդա Դարբինյանը եւ Սառնաղբյուրի ԵԳԱ անդամ Թամարա Աճեմյանը «Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ԶԿ-ի կողմից կազմակերպված բնապահպանական դասընթացին մասնակցելուց հետո որոշեցին Կանո գյուղում կազմակերպել «Երիտասարդների դերը շրջակա միջավայրի պաշտպանության գործում» թեմայով սեմինար: Ըստ նրանց, սովյալ պահին Կանո գյուղում ավելի շատ բնապահպանական խնդիրներ կային, քան Սառնաղբյուր եւ Ախուրյան համայնքներում, եւ հարկավոր

էր բարձրացնել Կանո համայնքի երիտասարդների իրազեկությունը այդ խնդիրների կարեւորության եւ դրանց լուծման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտության վերաբերյալ: Սեմինարը տեղի ունեցավ ապրիլի 20-ին: Մասնակիցները՝ Կանո համայնքի երիտասարդները, մանրամասն տեղեկություններ ստացան բնապահպանական հարցերի վերաբերյալ, մասնակցեցին խմբային աշխատանքների, դիտեցին թեմատիկ տեսաֆիլմ, քննարկեցին համայնքում առկա բնապահպանական տարբեր խնդիրներ եւ մշակեցին գործողությունների պլան՝ այդ խնդիրների լուծման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու նպատակով:

Գործողությունների պլանում ընդգրկված կետերից էին համայնքում աղբահանության կազմակերպումը, հուշարձանի տարածքի մաքրումն ու բարեկարգումը եւ գյուղում ծառատունկի կազմակերպում եւ իրականացումը: Ի դեպ, այս ամենը Կանոյի երիտասարդներն իրականացրեցին ապրիլի վերջին: Մասնակիցների գնահատումով սեմինարը շատ արդյունավետ էր, եւ նրանք որոշեցին շարունակել համագործակցել Ախուրյանի եւ Սառնաղբյուրի ԵԳԱ-ների հետ, քանզի միասին նրանք կարող էին ամել ավելին եւ ավելի մեծ արդյունքների հասնել՝ շրջակա միջավայրի պաշտպանության գործում միավորելով Շիրակի մարզի երիտասարդներին:



Քաղաքացիական ակտիվություն Լոռիում. Կանանց իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացում; պայքար կոռուպցիայի դեմ

Ապրիլին Դսեղի ԵԳԱ անդամները նախաձեռնեցին համայնքում կազմակերպել սեմինար՝ «Կանանց իրավունքներ» թեմայով: Սեմինարը վարելու համար նրանք դիմեցին Լեջանի ԵԳԱ-ին, քանի որ գիտեին, որ վերջիններս նույն թեմայով սեմինար արդեն անց էին կացրել իրենց համայնքում: Լեջանի ԵԳԱ-ն սիրով ընդունեց իրավունքների և ապրիլի 22-ին Լեջանի ԵԳԱ անդամ Սաթենիկ Պալայանը և խաղաղության կորպուսի կանավոր Անդրես Զեդրիկսոնը Դսեղում անցկացրեցին «Կանանց իրավունքներ» թեմայով սեմինարը: Այն շատ ինտերակտիվ էր, ընթացակարգը հարուստ, առաջադրանքներով, խմբային աշխատանքներով և քիմի կողմից կատարված աշխատանքների ներկայացմամբ: Սեմինարին մասնակցած Դսեղի ԵԳԱ անդամները և համայնքի այլ երիտասարդները գնահատեցին սեմինարը որպես շատ արդյունավետ և շնորհակալություն հայտնեցին Լեջանի ԵԳԱ-ին իրենց համայնքի երիտասարդներին կանանց իրավունքների և գեղդերային հավասարության մասին նման կարևոր տեղեկություններ և գիտելիքներ փոխանցելու համար:

Այս եռամսյակի ընթացքում Լոռու մարզի Լեջան համայնքի ԵԳԱ-ի գործունեության առաջնահերթ ոլորտներից էր կոռուպցիայի դեմ պայքարը: Ցանկանալով իրենց ներդրումն ունենալ հանրապետությունում կոռուպցիայի նվազեցման գործում՝ ԵԳԱ անդամները հանդիպումներ են ունեցել գյուղապետի, դպրոցի տնօրենի և համայնքի այլ անդամների հետ՝ այդ երեւույթի դեմ պայքարելու միջոցների վերաբերյալ նրանց տեսակետները պարզելու նպատակով: Քանի որ համայնքի երիտասարդներից շատերը սովորում են Վանաձորում, ԵԳԱ անդամները հանդիպումներ ունեցան նաև Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի (ՎՊՄԻ) ղեկավարի, տարբեր բաժինների ղեկավարների, դասախոսների, ինչպես նաև ուսանողական խորհրդի անդամների հետ՝ քննարկելու կրթական համակարգում կոռուպցիային և դրա դեմ պայքարին առնչվող հարցեր: Ինստիտուտի ղեկավարի հետ հանդիպման ընթացքում, որպես կրթական ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի հնարավոր միջոց, ԵԳԱ անդամները

առաջարկեցին ինստիտուտի դասախոսների և ուսանողների համար կազմակերպել բանավեճեր և սեմինարներ՝ շարունակելու բարձրացնել իրազեկությունը խնդրի վերաբերյալ և քննարկելու կոռուպցիայի դեմ պայքարի հնարավոր միջոցները: ՎՊՄԻ ղեկավարը ողջունեց ԵԳԱ անդամների առաջարկը: Ներկայումս ԵԳԱ անդամները պատրաստվում են անցկացնել բանավեճեր և սեմինարներ, որոնք կնպաստեն երեւույթի վերաբերյալ իրազեկության բարձրացմանը և կրթական հաստատություններում կոռուպցիայի մակարդակի նվազեցմանը: ԵԳԱ անդամները նաև պատրաստվում են հանդիպել հարեւան համայնքի՝ Ստեփանավանի քաղաքապետի ու համայնքի բնակիչների հետ և նրանց հետ ևս քննարկել կոռուպցիայի դեմ պայքարի հարցը: Հանդիպումների և քննարկումների արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա ԵԳԱ-ն նախատեսում է մշակել գործողությունների պլան, որի նպատակը կլինի էլ ավելի բարձրացնել հանրու-



«Կանանց իրավունքներ» թեմայով սեմինար Դսեղի ԵԳԱ (Լոռու մարզ) գործունեության կենտրոնում

յան իրազեկությունը հարցի վերաբերյալ և նվազեցնել կոռուպցիայի մակարդակը պետությունում: ԵԳԱ անդամները հուսով են, որ կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված իրենց ջանքերը կհամալրեն Հայաստանում հակակոռուպցիոն ավելի լայնամասշտաբ նախաձեռնությունների շարքը և, ընդհանուր առմամբ, կնպաստեն հանրապետությունում կոռուպցիայի նվազեցմանը:

Սեմինար խնամախում՝ համայնքի երիտասարդներն այժմ տիրապետում են համակարգչի և ինտերնետից օգտվելու հմտությունների

Մայիսին խնամախի ԵԳԱ-ն (Սյունիքի մարզ) կազմակերպեց սեմինար՝ համայնքի երիտասարդների մոտ տեղեկատվական տեխնոլոգիաների և ինտերնետի վերաբերյալ գիտելիքների պակասը լրացնելու նպատակով: Սեմինարը տեղի ունեցավ մայիսի 27-ին՝ Տեղեկատվական հաղորդակցային տեխնոլոգիաների համաշխարհային օրը: Սեմինարին մասնակցելու համար ԵԳԱ անդամները իրավիճակ էին համայնքի այն երիտասարդներին, որոնք ցանկանում էին ավելի շատ իմանալ համակարգչի, ինտերնետի և հեռահաղորդակցման ժամանա-

կակից այլ միջոցների մասին: Սեմինարը վարելու համար ԵԳԱ-ն խնամախ էր իրավիճակ էին համակարգչի մասնագետ Նարինե Դանիելյանին (ք. Գորին): Սեմինարի ընթացքում մասնակիցները գիտելիքներ ստացան տեղեկատվական տեխնոլոգիաների գաղափարները պատմության մասին, ձեռք բերեցին համակարգչային հիմնական ծրագրերից, ինտերնետից և էլ. փոստից օգտվելու, ֆորումներում և «Օնլայն» քննարկումներում մասնակցելու հմտություններ: Նյութն ավելի մատչելի դարձնելու նպատա-

կով սեմինարի ողջ ընթացքում օգտագործվում էր տեսանյութ, որի միջոցով ցուցադրվում էին համապատասխան թեմային առնչվող մանրամասները (օՆ-լայն էջեր, ֆորումներ, էլ. փոստի հասցեի բացում և այլն): Մասնակիցներին հատկապես շատ հետաքրքրեց իրենց համագործակցի կազմակերպություններին և պետական մարմիններին սովորական փոստով մասնակներ ուղարկելու փոխարեն էլեկտրոնային մամուլներ ուղարկելու հնարավորությունը: Սեմինարը շատ արդյունավետ

էր. սահմանները, մայրաքաղաքից հեռու և մեկուսացված գյուղում բնակվող երիտասարդներն ստացան բավականին հարուստ տեղեկություններ ժամանակակից հեռահաղորդակցման միջոցների վերաբերյալ: Ձեռք բերելով նաև ինտերնետից օգտվելու հիմնական հմտություններ՝ նրանք այժմ ավելի վճռակամորեն են տրամադրված գյուղում ինտերնետ կարգ հասանելի դարձնելու և իրենց հմտությունները էլ ավելի զարգացնելու ու ԵԳԱ աշխատանքներում օգտագործելու հարցում:

ԵԳԱ/ՀԳՀ գործողությունների պլանավորման աշխատանքային հանդիպումներ ԵՀԳԾ 12 նոր համայնքներում

Այս եռամսյակի ընթացքում ԵՀԳԾ մարզային համակարգողները Քաղաքացիական գործողությունների պլանավորման աշխատանքային հանդիպումներ անցկացրեցին ծրագրի շրջանակներում Հայաստանում հիմնադրված ևս 12 ԵԳԱ/ ՀԳՀ-ների անդամների համար: Հանդիպումներն անց են կացվում ինտերակտիվ և պրակտիկ մեթոդների կիրառմամբ, որոնք մասնակիցներին օգնում են բացահայտել և գնահատել իրենց համայնքներում առկա կարիքները և համայնքային/ երիտասարդության խնդիրները, գտնել այդ խնդիրների լուծման նպատակով ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ և կազմել ԵԳԱ/ՀԳՀ գործողությունների պլան:

- Ապրիլ-հունիս ժամանակահատվածում այդ աշխատանքային հանդիպումներին մասնակցել է մոտ 250 մարդ:
- Հանդիպումների ընթացքում մասնակիցների կողմից արժանատիվ խնդիրներից էին.
 - Տեղեկատվության պակաս
 - Համայնքային տեղեկագրի կամ թերթի բացակայություն
 - Ներհամայնքային ճանապարհների վատ վիճակ
 - Աղբահանության մեխանիզմի բացակայություն
 - Սպորտահիլիճների և խաղադաշտերի բացակայություն
 - Գործազրկություն
 - Ինտերնետի բացակայություն



ԵԳԱ/ՀԳՀ գործողությունների պլանավորման աշխատանքային հանդիպում Մարտունի գյուղում (Գեղարքունիքի մարզ)

Կրթությանը զարգացման ակադեմիա
 Այգեժոր 10,
 0019 Երևան
 Հայաստանի Հանրապետություն

Հեռ.՝ (374 10) 225 636
 Ֆաքս՝ (374 10) 275 686
 Էլ փոստ՝ ycap@aed.am

Երիտասարդության և համայնքների
 գործողությունների ծրագիր



Մեր ուսուկայքերն են՝
<http://ycap.am>
<http://aed.am>

Համայնքի բյուջեի և զարգացման պլանի քննարկում Գոմքում

Ապրիլին Գոմքի ՀԳՀ-ն (Վայոց Ձորի մարզ) կազմակերպեց համայնքային ժողով՝ համայնքի բյուջեի և զարգացման պլանի քննարկման նպատակով: Հանդիպումը կազմակերպելու առաջարկը ստացվել էր համայնքի բնակիչների կողմից. նրանք ունեին մի շարք հարցեր՝ կապված վերոհիշյալ թեմայի հետ: Այսպիսով, ապրիլի 17-ին, համայնքի բյուջեի ձեւավորման և համայնքի զարգացման պլանի վերաբերյալ տեղեկություններ ստանալ ցանկացող համայնքի անդամները հավաքվել էին մասնակցելու ժողովին և իրենց հետաքրքրող հարցերն ուղղելու գյուղապետին և գյուղապետարանի հաշվապահին: Վերջիններս համայնքի բնակիչներին մանրամասն բացատրեցին համայնքի բյուջեի ձեւավորման մեխանիզմները, ներկայացրեցին բյուջեի ներկայիս չափը և պարզաբանեցին, թե ինչու է այն կատարվում միայն 49%-ով: Համայնքի բնակիչները պարզեցին, որ բյուջեի ցածր կատարողականության հիմնական պատճառներից է բնակիչների արտահոսքը համայնքից, ինչի հետևանքով էլ հնարավոր չի լինում հավաքել հողի և սեփականության հարկերը, որոնք պետք է ուղղվեին համայնքի բյուջե: Հանդիպման ընթացքում մասնակիցները

քննարկեցին նաև այլ հարցեր և խնդիրներ, անդրադարձան նաև համայնքի զարգացման պլանում ներառված ծրագրերին: Համայնքի բնակիչների կողմից բարձրացված խնդիրներից էր գյուղում ընթացքի մեջ գտնվող տների և հողի սեփականաշնորհման հետ կապված իրավիճակը: Գյուղի բնակիչներին մտահոգում էր այն հանգամանքը, որ սեփականաշնորհվող տների մեծ մասը գտնվում էին վատթար վիճակում և ենթակա էին կապիտալ վերանորոգման: Հարցի քննարկումից հետո ժողովի մասնակիցները որոշեցին մասնակցաբար և ուղարկել կառավարության համապատասխան կառույց՝ խնդրելով աջակցել Գոմք գյուղի մեծամասամբ փախստական բնակչությանը սեփականաշնորհված բնակարանների և տների վերանորոգման հարցում: ՀԳՀ կողմից կազմակերպված համայնքային ժողովը ծառայեց իր նպատակին. համայնքի բնակիչները հնարավորություն ունեցան ոչ միայն պարզելու համայնքի բյուջեի հետ կապված իրենց հարցերը, այլ նաև համայնքի ղեկավարների հետ միասին քննարկեցին իրենց խնդիրները, մտահոգությունները, տեղեկացան համայնքի զարգացման ծրագրին և միասին կազմեցին հետագա գործունեության պլանը:

ԵՀԳԾ-ն ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորված հնգամյա ծրագիր է, որը իրականացվում է Կրթությանը զարգացման ակադեմիայի (ԿԶԱ) կողմից: ԵՀԳԾ հիմնական նպատակն է ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր համայնքում սերմանել անհատի կամ անձանց խմբի՝ որպես հանրային շահերի պաշտպան ծառայելու գաղափարը և դրա կարելությունը:

Ծրագրի երեք հիմնական բաղադրիչներն են.

1. Ստեղծել մեխանիզմներ, որոնց միջոցով կխթանվի երիտասարդների և համայնքների այլ անդամների մասնակցությունը իրենց համայնքներում հանրային հարցերի լուծման գործընթացին՝ աջակցելով համայնքներում երիտասարդության, համայնքային և հանրային խնդիրների լուծմանը զբաղվող երիտասարդական գործունեության ակունքների (ԵԳԱ) և Համայնքների գործունեության հանձնաժողովների (ՀԳՀ) հիմնադրմանը:
2. Ավելացնել երիտասարդների և համայնքների այլ անդամների՝ քաղաքացիական ակտիվության բարձրացման և հանրային հարցերի լուծման գործընթացում ավելի ակտիվ մասնակցելու համար անհրաժեշտ գիտելիքները/հմտությունները՝ երիտասարդներին և համայնքի այլ անդամներին տրամադրելով հնարավորություններ, որոնք կօգնեն բարձրացնել նրանց իրազեկությունը, հարստացնել գիտելիքները և զարգացնել հմտությունները, որոնք անհրաժեշտ են երիտասարդությանը, համայնքի այլ անդամներին և հանրությանը հուզող խնդիրները հաջողությամբ լուծելու համար:
3. ԵԳԱ/ՀԳՀ-ներն իրականացնեն ծրագրեր, որոնք կբարձրացնեն քաղաքացիական ակտիվությունը և մասնակցությունը, կբխեն հանրության և համայնքի շահերից, կնպաստեն համայնքներում հանրային հարցերի լուծման գործում սիստեմատիկ բարեփոխումների իրականացմանը և կխթանեն համայնքի կարիքների լուծման համար ավելի կայուն մոտեցումների որդեգրումը:

Կոտայք մարզի ակտիվ խմբերն արձագանքում են համայնքի կարիքներին

Համայնքի բնակիչների գործազրկության խնդրի լուծմանը նպաստելու նպատակով, հունիս ամսին, Նոր Գեղի ԵԳԱ-ն նախաձեռնեց ինտերնետի միջոցով գտնել հայկական համապատասխան կայքերում տեղադրված՝ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկություններ և հայտարարություններ, տպել դրանք և փակցնել գյուղում՝ մարդաշատ վայրերում, որպեսզի այդ տեղեկատվությունը հասանելի դառնա բոլոր գործազուրկների համար, և վերջիններս կարողանան դիմել իրենց համապատասխանող աշխատանքի: ԵԳԱ-ի այս նախաձեռնությունը շատ դրական արձագանք ստացավ համայնքի բնակիչների կողմից, քանի որ համայնքի միայն շատ փոքր թվով բնակիչներ ունեին ինտերնետից օգտվելու հնարավորություն և կարող էին գտնել մասնատիպ հայտարարություններ: ԵԳԱ նախաձեռնության արդյունքում համայնքից մի քանի հոգի արդեն գտել են աշխատանք: ԵԳԱ անդամները պարբերաբար թարմացնում են աշխատանքի հայտարարությունները և տարածում են դրանք համայնքի բնակիչների

շրջանում, այնպես, որ բոլորին հավասարապես հասանելի լինի թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվությունը: Հունիսին, Կոտայք գյուղի ՀԳՀ-ն երիտասարդ մայրերի և համայնքի այլ անդամների համար կազմակերպեց սեմինար՝ «Մանկան առողջություն» թեմայով: Սեմինարը վարեց ՀԳՀ առողջապահական ոլորտի պատասխանատու և Կոտայք գյուղի ամբուլատորիայի մանկական բուժքույր Լարիսա Արտաշեսյանը: Նա մասնակիցներին մանրամասնորեն ներկայացրեց մանկան առողջության, իրիդենայի, սննդակարգի, պատվաստումների, մանկական հիվանդությունների (կարմրուկ, կարմրախտ, քութեշ, ռախիտ և այլն) և դրանց կանխարգելման ու բուժման մասին կարևոր տեղեկություններ: Մասնակիցների գնահատմամբ սեմինարը շատ օգտակար էր. նրանք ստացան կարելու տեղեկություններ և պատվաստումների, մանկական հիվանդությունների կանխարգելման և բուժման եղանակների մասին տեղեկություններ պարունակող բուկլետներ:



«Մանկան առողջություն» թեմայով սեմինար՝ կազմակերպված Կոտայքի ՀԳՀ կողմից երիտասարդ մայրերի և համայնքի այլ անդամների համար